



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏ
ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

2016 թ. Եպիսկոպոսի 28-ի թիվ 34/ժ

ՀՀ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ 2015Թ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԻԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՍԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասի
ը) կետով և 13-րդ հոդվածի 7-րդ մասով, ՀՀ վերահսկիչ պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Ընդունել ՀՀ վերահսկիչ պալատի գնումների գործընթացի կազմակերպման հանձնաժողովի առաջարկությունը՝ ՀՀ վերահսկիչ պալատի աշխատակազմում (2015թ. վերաբերյալ) պարտադիր առույտի ծառայություններ իրականացնելու կապակցությամբ քանակցային ընթացակարգի կիրառման արդյունքում առաջին տեղը զբաղեցրած ճանաչել «ՀԱՅԱՌԻԴԻՏ» ՍՊԸ՝ որպես նվազագույն գին առաջարկողի և համապատասխան փորձառություն ունեցողի:
2. ՎՊ աշխատակազմին՝ «ՀԱՅԱՌԻԴԻՏ» ՍՊԸ հետ մինչև ս/թ. դեկտեմբերի 5-ը կնքել համապատասխան պայմանագիր՝ գործընթացը սկսելու համար:

ՀՀ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ



Ի. ԶԱԲԱՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏ
ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

201 6 թ . ղեկավարման ընթացքի 26-ի թիվ 37/4

«ՀԱՅԱՌՈՒԴԻՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅ ՀՀ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԴԻՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ
ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 34/1 որոշման համաձայն, «ՀԱՅԱՌՈՒԴԻՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից աուդիտի է ենթարկվել ՀՀ վերահսկիչ պալատի 2015 թվականի ֆինանսական գործունեությունը:

Աուդիտի արդյունքների վերաբերյալ ընկերության կողմից ներկայացված «Ֆինանսական հաշվետվությունների եզրակացությունը», և «Նամակ ղեկավարությանը», նյութերն ուսումնասիրելուց և քննարկելուց հետո ՀՀ վերահսկիչ պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է .

1. «ՀԱՅԱՌՈՒԴԻՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ՀՀ վերահսկիչ պալատի Աշխատակազմում իրականացված աուդիտի արդյունքների մասին աուդիտորական եզրակացությունն ընդունելի գիտություն:

2. Հիմք ընդունելով «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում ամրագրված հրապարակայնության սկզբունքը՝ այն տեղադրել ՀՀ վերահսկիչ պալատի ինտերնետային կայք էջում:

ՀՀ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ

*Զեպարյան
հնչ ԲՆԿ Ե՝*



Ի. ԶԱՔԱՐՅԱՆ

<<Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի
աշխատակազմ>>

պետական կառավարչական հիմնարկ

ՆԱՄԱԿ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

2015թ. Դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների տարեկան
աուդիտի վերաբերյալ

Հարգելի տիկնայք և պարոնայք.

Համաձայն 05.12.2016թ. կնքված N «ՀՀՎՊ-ԲԸԱԾՁԲ-15/11» պայմանագրի՝ մենք ավարտեցինք «Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի (այսուհետև՝ Վերահսկիչ պալատ) 01.01.2015-31.12.2015թ. ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների, այդ թվում՝ Ծախսերի նախահաշիվների կատարման հաշվեկշիռների, ինչպես նաև Հաշվետու ժամանակաշրջանում N 01 01 01 02 «Վերահսկիչ պալատի պահպանում», N 01 01 01 09 «ՀՀ Վերահսկիչ պալատի պահուստային ֆոնդ» և N 10 09 02 03 «ՀՀ Վերահսկիչ պալատի աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» ծրագրերի Բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին կազմած հաշվետվությունների աուդիտը, որի արդյունքում տրվեց դրական եզրակացություն:

Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվեցին Աուդիտի միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան: Աուդիտի միջազգային ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք և իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի պլանավորման և իրականացման ընթացքում մենք ուսումնասիրել ենք Վերահսկիչ պալատի վերահսկողության կառուցվածքը՝ նպատակ ունենալով որոշելու մեր կողմից իրականացվող աուդիտի ընթացակարգերը և ոչ թե Վերահսկիչ պալատի ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ կարծիք արտահայտելու կամ ֆինանսական հաշվետվությունների վրա էական ազդեցություն չունեցող խախտումներն ու բացթողումները բացահայտելու համար:

Աուդիտն անցկացվեց բարենպաստ աշխատանքային պայմաններում: Աշխատանքների հաջող անցկացմանը նպաստեց Վերահսկիչ պալատի ղեկավարության և պատասխանատու աշխատակիցների հետ մեր սերտ համագործակցությունը: Աուդիտի իրականացման ընթացքում մեզ տրամադրվեցին Վերահսկիչ պալատի 01.01.2015-31.12.2015թ. ժամանակաշրջանի համար կազմած ֆինանսական հաշվետվությունները, հաշվապահական հաշվառման փաստաթղթերը և անհրաժեշտ այլ տեղեկատվություն, որոնց շնորհիվ ժամանակին ավարտվել են աուդիտի աշխատանքները, ինչի համար մեր գոհունակությունն ենք հայտնում Վերահսկիչ պալատի ղեկավարությանը:




Հայկ Վարդապետյան
Մարտին Ստեփանյան

